

ԿԱՐԾԻՔ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

**ԱՐԹՈՒՐ ԱՐՄԵՆԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ «ՀԱՐԿԱՅԻՆ ԲԵՌԻ ԱՐԴԱՐԱՅԻ
ԲԱՇԽՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՆՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ Ը.00.02- «ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ, ՆՐԱ ՈԼՈՐՏՆԵՐԻ
ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ»
ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑ-
ՄԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ**

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Յուրաքանչյուր պետության ֆինանսական համակարգում առանձնահատուկ տեղ ունեն հարկերը, որոնք պետության գոյատևման և կայունացման հիմքն են: Անկախ երկրի զարգացման մակարդակից, քաղաքական կառուցվածքից՝ հարկերը համարվում են տնտեսության առողջացման, կայունացման ու զարգացման կարևոր միջոց:

Ինչպես հայտնի է հարկման գործընթացը հիմնված է որոշակի սկզբունքների վրա, որոնցից կարևորներն են արդարության և արդյունավետության սկզբունքները: Հետևաբար հարկային բեռի արդյունավետ և արդարացի բաշխումը հանդիսանում է հարկային քաղաքականության կարևորագույն խնդիրներից մեկը:

Ընդհանուր առմամբ հարկային բեռն դիտարկվում է որպես «ծանրություն», որն գլխավորապես կրում են հարկ վճարողները: Հետևաբար հարկային բեռը պետք է մշտապես գտնվի պետության վերահսկողության ներքո, նպատակ ունենալով ինչպես բնակչության, այնպես էլ պետության համար բացասական հետևանքների կանխումը:

Վերը նշվածից ելնելով ակնհայտ է, որ ցանկացած երկրի համար հարկային բեռի արդարացի և արդյունավետ բաշխումն եղել և մնում է արդիական խնդիր: Հարկային բեռը ժամանակի ընթացքում կարող է փոփոխվել՝ պայմանավորված կիրառվող տնտեսական քաղաքականության գերակայություններով, տնտեսության զարգացման տեմպերով և այլ գործոններով: Նշվածը մեկ անգամ ևս շեշտադրում է հարկային բեռի բաշխման խնդիրների ուսումնասիրության հրատապ անհրաժեշտությունը:

Տվյալ ուսումնասիրությունը կարևորվում է նաև հարկային բեռի արդարացի բաշխման խնդիրների լուծման գործընթացում «արդարություն» հասկացության ընկալման տեսանկյունից: Այստեղ հեղինակը կարևորել է այն չափանիշների բնորոշումը, որոնց կիրարկմամբ հարկման ենթակա սուբյեկտները կամ օբյեկտները հանդիսանում են հավասար կամ համանման պայմաններում գտնվողներ (արդարության հորիզոնական սկզբունք): Մյուս դեպքում՝ անհավասար դրության մեջ գտնվողների հանդեպ ցուցաբերվում է տարբերակված կամ ոչ հավասար մոտեցում (արդարության ուղղահայաց սկզբունք):

Այստեղ հեղինակը ամենակարևոր խնդիր է դիտարկել այն, թե հարկային բեռի արդարացի և հավասարաչափ բաշխման առումով, որ սկզբունքին է տրվում առաջնահերթություն: Ըստ հեղինակի այն պարագայում է հնարավոր լուծել հարկային քաղաքականության արդարության և արդյունավետության խնդիրները, երբ հարկային բեռի մակարդակը չի վնասում ակտիվ գործարար միջավայրի ապահովման և պետբյուջեի եկամուտների համալրման գործընթացին:

Հեղինակի կողմից հարկային բեռի վերլուծությունների համար ընտրված ժամանակահատվածը և տարիները հիմնավորված են: Դիտարկված ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետությունն ունեցել է ինստիտուցիոնալ տեսանկյունից որոշակի ձևավորված հարկային համակարգ:

Ատենախոսությունը նվիրված է Հայաստանի Հանրապետության հարկային բեռի արդարացի բաշխման հիմնախնդիրներին, մասնավորապես կայուն հարկային համակարգի ձևավորման տեսամեթոդաբանական հիմքերի ուսումնասիրությանը, դրանց գործնականում կիրառմանը: Նշվածն էլ պայմանավորում է ուսումնասիրվող թեմայի կարևորությունն ու արդիականությունը:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

Ատենախոսության նպատակն է Հայաստանի Հանրապետության հարկային բեռի արդարացի բաշխման հայեցակարգի մշակումն ու դրա գործնականում կիրառությունը:

Նշված նպատակին համապատասխան՝ աշխատանքի հիմքում դրվել և լուծվել են մի շարք խնդիրներ, որոնց շրջանակն հետևյալն է.

- հարկային բեռի էության, դասակարգման մոտեցումների ուսումնասիրումը,
- հարկային բեռի արդարացի և հավասարաչափ բաշխման հայեցակարգային մոտեցումների տարանջատումը,
- հարկային քաղաքականության արդյունավետության բարձրացման մոտեցումների ներկայացումը,
- արտերկրում և ՀՀ-ում հարկային բեռի արդյունավետության մակարդակի գնահատումը,
- հարկային բեռի բաշխման առանձնահատկությունների ներկայացումը՝ ըստ հարկատեսակների,
- ուղղակի և անուղղակի հարկերի մասով հարկային բեռի բաշխման մեխանիզմների վերլուծությունը,
- եկամտային հարկի մասով հարկային բեռի արդարացի և արդյունավետ բաշխման խնդիրների վերանայումը,
- հարկային բեռի վրա ազդող գործոնների հիմնավորումը և դրանց չափի հաշվարկը,
- «հարկային ծախս» հասկացության մեկնաբանումը և դրա մակարդակի ձևավորման վրա ազդող գործոնների ներկայացումը,

- ԱԱՀ-ի դիֆերենցված դրույքաչափերի կիրառմանն ուղղված առաջարկությունների մշակումը:

Ատենախոսության հիմնական կառուցվածքային մասերը բխում են առաջադրված խնդիրներից, դրանք հանդիսանում են միմյանց լրացնող հաջորդականություն կազմող բաղադրիչներ: Աշխատանքը գլխավորապես բաղկացած է երեք գլուխներից, որոնք ընդհանուր գծերով հետևյալն են:

Ատենախոսության առաջին՝ «Հարկային բեռի տեսամեթոդաբանական հիմքերը» գլխում ներկայացվել են հարկային բեռի էությունը և դասակարգման մոտեցումները, ինչպես նաև՝ հարկային բեռի արդարացի բաշխման հայեցակարգային մոտեցումներն ու տեսությունները հարկային քաղաքականության համատեքստում:

Տվյալ գլխում հեղինակը վկայակոչելով տնտեսագիտության դասականների և այլ տնտեսագետների ուսումնասիրությունները հավաստում է, որ տնտեսական աճի վրա էական ազդեցություն ունեն հարկային եկամուտները: Մասնավորապես, երկրի մակրոտնտեսական վիճակի վրա հարկային քաղաքականությունն ու հարկային բեռն ունեն զգալի ներգործություն:

Ըստ հեղինակի արդարացի հարկման սկզբունքները գործնականում կիրառելիս պետք է ձգտել հավասարակշռել պետության, հասարակության և հարկ վճարողների շահերը: Իսկ պետության խնդիրն է ստեղծել բարենպաստ պայմաններ հարկային համակարգերում ամրագրված սկզբունքների իրականացման համար:

Ատենախոսի մոտեցմամբ՝ արդարության գաղափարը դիտարկվում է որպես մարդու բարեկեցության ապահովման շարունակական գործընթաց: Վերջինիս առումով վկայակոչվում են տնտեսագետների բնորոշումները, մասնավորապես՝ արդարությունը բնորոշվում է իբրև մարդու բարեկեցության մշտական բարելավման մղում, որը չպետք է հակասության մեջ գտնվի մեկ այլ անձի արդարության ձգտելու անձնական մոտիվացիայի հետ:

Ատենախոսության երկրորդ **«Հարկային բեռի արդարացի բաշխման և դրա կառավարման գերակայությունները ՀՀ-ում»** գլխում ներկայացվել է հարկային բեռի բաշխման մեխանիզմներն արտերկրում և դրանց տեղայնացման առանձնահատկությունները ՀՀ-ում և հարկային բեռի գնահատման ուղղությունները հանրապետությունում:

Տվյալ գլխի առաջին բաժնում ատենախոսի կողմից կարևորվել է հարկային բեռի բաշխման խնդիրների լուծման առաջնահերթությունների որոշումը:

Ըստ հեղինակի այն դեպքում, երբ հարկային բեռի մակարդակը բավարարում է գործարար ակտիվության բարձրացման և բյուջետային եկամուտների համալրման շահերին կամ չի վնասում դրանց, ապա հնարավոր է լուծել հարկային քաղաքականության արդարության և արդյունավետության խնդիրները: Հարկային բարեփոխումների վերջնանպատակը հարկային բեռի արդարացի բաշխումն է՝ պահպանելով արդարության

հորիզոնական և ուղղահայաց սկզբունքների կիրառությունը: Ըստ այդ սկզբունքի՝ հավասար դրության մեջ գտնվողները պետք է հարկվեն հավասարապես, ինչը ենթադրում է հարկման արդարության հորիզոնական սկզբունքը, իսկ անհավասարների նկատմամբ ոչ հավասար և ոչ միանման մոտեցում պետք է դրսևորել, ինչը ենթադրում է հարկման արդարության ուղղահայաց սկզբունքը:

Տվյալ բաժնում հեղինակի կողմից առանձնացվել են հարկային համակարգի 4 մոդելներ, որոնք բնորոշում են հարկայի բեռի մակարդակը: Դրանք են՝ անգլոսաքսոնական, մայրցամաքային, լատինա-ամերիկյան, խառը: Ներկայացվել է այդ մոդելների բնորոշիչները և առանձնահատկությունները:

Դիտարկվող գլխի երկրորդ բաժնում ներկայացվել են հարկային բեռի գնահատման ուղղությունները:

Աշխատանքում հեղինակը հիմնավորել է հարկային բեռի և տնտեսական աճի միջև գոյություն ունեցող կապը, ըստ սահունության գործակցի: Ըստ հաշվարկված տվյալների ՀՆԱ-ի յուրաքանչյուր տոկոսային կետի աճի դեպքում հարկային եկամուտներն աճել են ավելի առաջանցիկ կերպով (2010-2022թթ. ՀՆԱ-ի 1 % աճին համապատասխանել է հարկային եկամուտների 1.17%-ով աճ):

Ըստ հեղինակի դիտարկված ժամանակահատվածում հարկային եկամուտների աճը պայմանավորված է եղել ոչ միայն տնտեսական աճով, այլ նաև վարվող հարկային քաղաքականությամբ՝ վարչարարության գործոնով, օրենսդրական փոփոխություններով:

Ռիշագրավ է հեղինակի դիտարկումներն ըստ հարկատեսակների (ԱԱՀ, ակցիզային հարկի, շահութահարկի, եկամտահարկի) հարկային բեռի կառուցվածքի ուսումնասիրումը, առանձնացված դրանց միտումների և առանձնահատկությունների գնահատումը:

Ատենախոսության երրորդ «Հարկային բարեփոխումների ռազմավարական գերակայությունները ՀՀ-ում» գլխում ներկայացվել է հարկային բեռի արդարացի և արդյունավետ բաշխման մոտեցումները ԱԱՀ-ի և եկամտային հարկի մասով, հարկային արտոնությունների կառավարման գերակայությունները հարկային բեռի արդարացի և արդյունավետ բաշխման համատեքստում:

Եզրափակիչ գլխի առաջին բաժնում հարկային բեռի արդարացի և արդյունավետ բաշխման նպատակով հեղինակի կողմից աշխատանքում մշակվել և գնահատվել են էկոնոմետրիկ մոդելներ, որոնց միջոցով հնարավոր է եղել բացահայտել մի շարք կարևորագույն մակրոտնտեսական ցուցանիշների ազդեցությունը ԱԱՀ-ի ծավալի վրա: ԱԱՀ-ի և դիտարկվող գործոնների միջև ազդեցությունը պարզաբանվել է քանակական և որակական գնահատման միջոցով: Վերջիններս հնարավորություն են տալիս հարկային քաղաքականության մշակման ընթացքում օբյեկտիվ որոշումներ կայացնելու:

Կատարված ուսումնասիրություններից հեղինակն եկել է այն հետևության, որ ներկայումս, հանրապետությունում ԱԱՀ-ին վերաբերող գլխավոր խնդիրներից մեկն այդ

հարկատեսակի բարձր և ստանդարտ կերպով կիրառվող դրույքաչափի հետ է կապված, ինչը հաղորդում է ԱԱՀ-ին ընդգծված անարդար և ռեգրեսիվ բնույթ: Հեղինակը գտնում է, որ ԱԱՀ-ի դիֆերենցված դրույքաչափերի կիրառումը տնտեսական զարգացման ներկայիս փուլում կարող է զգալիորեն նպաստել հարկային բեռի արդարացի բաշխմանը, արտադրության ծավալների ընդլայնմանը և ապրանքների ընդհանուր գների նվազեցմանը: Տնտեսության խթանմանը միտված հարկային միջոցառումների շարքում նպատակահարմար կլինի սահմանել ԱԱՀ-ի նվազեցված դրույք, կենսական նշանակություն ունեցող ապրանքների և ծառայությունների համար՝ ինչպես-որ իրականացվում է աշխարհի շատ երկրներում: Հեղինակը ԱԱՀ-ի նվազեցված դրույքաչափերի կիրառման համար աշխատանքում առաջադրել է ապրանքախմբերի ցանկ:

Եզրափակիչ գլխի երկրորդ բաժնում ատենախոսը ներկայացրել է հարկային բեռի արդարացի և արդյունավետ բաշխման մոտեցումներն եկամտային հարկի մասով:

Հեղինակը ներկայացրել և վերլուծել է երեք տարբեր չափի աշխատավարձ ստացող ֆիզիկական անձանց հարկման առանձնահատկությունները՝ տարբեր հարկման համակարգերի (ռեգրեսիվ, համահարթ, պրոգրեսիվ) կիրառման դեպքում:

Հեղինակը կատարված ուսումնասիրություններով եկել է այն հետևության, որ ռեգրեսիվ համակարգն ընդհանրապես չի համապատասխանում արդարության սկզբունքներին:

Վերլուծելով հարկման պրոգրեսիվ և համահարթ համակարգերի առավելություններն ու թերությունները՝ հեղինակը եզրակացրել է, որ համահարթ հարկման դեպքում ամբողջությամբ խախտվում է արդարության սկզբունքները, իսկ պրոգրեսիվ հարկման դեպքում կարող են առաջանալ սովետային դիսկեր և առաջացնել տնտեսական անարդյունավետություն:

Ատենախոսն առաջարկում է կիրառել պրոգրեսիվ հարկման համակարգը, որը գոյություն ունեցող համակարգերից ամենաշատն է համապատասխանում արդարության սկզբունքին, սակայն նախկինում կիրառվող (23%, 28%, 36%) դրույքաչափերի միջակայքերն անհրաժեշտ է փոքրացնել անհավասարության դիսկերը մեղմելու նպատակով: Իսկ ներկայիս համահարթ համակարգը թողնելու դեպքում՝ հարկային բեռի բաշխումը հավասարակշռելու համար, առաջարկվում է մինչև 150.0 հազ. դրամ աշխատավարձ ստացող քաղաքացիների դեպքում սահմանել չհարկվող շեմ. աղքատության մակարդակի չափով:

Տվյալ գլխի եզրափակիչ բաժնում առաջարկվել են հարկային արտոնությունների կառավարման գերակայությունները հարկային բեռի արդարացի և արդյունավետ բաշխման համատեքստում:

Արտոնությունների գծով հարկային բեռի արդարացի բաշխումը գնահատելու նպատակով ատենախոսությունում ներկայացվել է վերջին 4 տարիների հարկային

արտոնությունների կիրառման արդյունքում պետական բյուջե պակաս մուտքագրվող հարկային եկամուտների մակրոտնտեսական գնահատականը հարկային արտոնություններից օգտվող տնտեսության ոլորտների գծով:

Ուսումնասիրության արդյունքների համաձայն հեղինակը գտնում է, որ ՀՀ-ում չափազանց մեծ է հատկապես ԱԱՀ-ի գծով տրամադրվող արտոնությունների քանակը՝ ազատված գործարքների շրջանակը:

Հեղինակը գտնում է, որ հարկային բեռի արդարացի և արդյունավետ բաշխման, ինչպես նաև՝ բյուջետային սահմանափակ հնարավորությունների առկայության, պետական աջակցության ծրագրերի մաքսիմալ հասցեականության ապահովման նպատակով հարկավոր է կրճատել ԱԱՀ-ից ազատման արտոնությունների շրջանակը, իսկ հասարակության սոցիալապես ոչ ապահով խմբերին հասցեական կերպով պետական բյուջեից հատկացվող աջակցության ծավալներն անհրաժեշտ է մեծացնել:

Աշխատանքի արդյունքային դրույթները ամփոփվել են եզրակացությունների մասում:

Ընդհանուր առմամբ աշխատանքի ուսումնասիրությունը թույլ է տալիս հետևություն անել, որ հեղինակին հաջողվել է լուծել առաջադրված խնդիրը, մասնավորապես ներկայացվել են հարկային բեռի արդարացի բաշխման հիմնախնդիրները Հայաստանի հանրապետությունում և առաջադրվել է դրանց լուծման հիմնավորված մոտեցումներ:

Ատենախոսությունը շարադրված է 138 էջի վրա, ներառում է 22 աղյուսակ, 15 գծապատկեր և հավելվածներ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Աշխատանքում իրականացված ուսումնասիրությունների և վերլուծությունների հիման վրա ստացված տեսական և գործնական նշանակության արդյունքներից որպես գիտական նորույթ կարևորվում են հետևյալները.

1. Գնահատվել են հարկային բեռի արդարացի և արդյունավետ բաշխման մոտեցումները եկամտային հարկի մասով և մշակվել են տարբերակներ հարկման տարբեր ռեժիմներում արդարության սկզբունքի պահպանման համար: Համահարթ և պրոգրեսիվ համակարգերի կիրառման դեպքում եկամտային հարկի բաշխման նպատակով առաջարկվել են անհրաժեշտ կարգավորումներ:
2. Հարկային քաղաքականության արդյունավետության բարձրացման և հանրապետությունում երկարաժամկետ հատվածում տնտեսության ռազմավարական խնդիրների լուծման նպատակով առաջարկվել է Հայաստանում գործող հարկատեսակների դիֆերենցված դրույքաչափերի կիրառում, հատկապես ԱԱՀ-ի մասով՝ սահմանելով առավել ցածր դրույքաչափեր առաջին անհրաժեշտության որոշակի ապրանքների համար:
3. Հարկային ծախսերի կառուցվածքի ուսումնասիրության հիման վրա առաջարկվել է հարկային ծախսերի կիրառման ռազմավարական ուղղություններ՝ հաշվի առնելով

պատերազմական և հետպատերազմական զարգացումները՝ կանխելով դրանց հետևանքով հնարավոր հարկային վնասների առաջացման ռիսկերը, ինչպես նաև մշակվել են հասցեական և ոլորտային արտոնությունների տրամադրման ռազմավարական ուղիներ:

Ընդհանուր առմամբ, ատենախոսին հաջողվել է ներկայացնել ամփոփ գիտական աշխատանք: Միաժամանակ, աշխատանքի ուսումնասիրությունից բացահայտվել է որոշ բացթողումներ, որոնք հիմնականում հետևյալն են.

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Ատենախոսության երկրորդ «Հարկային բեռի արդարացի բաշխման և դրանց կառավարման գերակայությունները ՀՀ-ում» անվանումով գլխի առաջին բաժնում հեղինակը հանգամանորեն ուսումնասիրել է բազմաթիվ զարգացած երկրներում հարկային բեռի բաշխման մեխանիզմներն, օգտգործելով հարկային բեռի բաշխման առանձնահատկությունները ներկայացնող երկարատև ժամանակահատված բնորոշող վիճակագրական նյութեր: Մեր կարծիքով աշխատանքի տվյալ մասը առավել շահած կլիներ եթե հեղինակը բաժնի եզրափակիչ մասում տարանջատված ներկայացներ այն մոտեցումների շրջանակը որոնք նախընտրելի են համարվում հարկային բեռի արդարացի բաշխման, տեսանկյունից մեր հանրապետության հարկային բարեփոխումների համար:
2. Աշխատանքի եզրափակիչ «Հարկային բարեփոխումների ռազմավարական գերակայությունները ՀՀ-ում» գլխի առաջին «Հարկային բեռի արդարացի և արդյունավետ բաշխման մոտեցումները ԱԱՀ-ի մասով», մեր կարծիքով տեսական և գործնական առումով առանցքային համարվող բաժնում հեղինակը ԱԱՀ-ի վրա բազմաթիվ գործոնների ռեգրեսիոն արժեքավոր վերլուծություններ է իրականացրել: Մեր դիտարկմամբ աշխատանքի տվյալ մասն առավել կշահեր, եթե ԱԱՀ-ի վրա ազդող գործոնների շրջանակում դիտարկվեր նաև ՀՆԱ-ի մեծությունը կամ ՀՆԱ-ի աճի տեմպը:
3. Հիշատակված բաժնում հեղինակը ուսումնասիրությունների հիման վրա հարկային բեռի արդարացի բաշխման նկատառումներից ելնելով առաջարկել է ԱԱՀ-ի նվազեցված, ինչպես նաև տարբերակված դրույքաչափերի սահմանում: Հարկ ենք համարում նշել, որ կիրառելիության առումով առաջարկն առավել օգտակար կլիներ եթե հեղինակը առանձին ապրանքային խմբերի համար ներկայացներ դրույքաչափերի առաջարկներ, այդ վերաբերում է նաև գյուղատնտեսական ապրանքատեսակներին (հիարկե այդ ապրանքատեսակների ԱԱՀ վճարողների մասով):
4. Եզրափակիչ գլխի նույնպես առանցքային համարվող «Հարկային բեռի արդարացի և արդյունավետ բաշխման մոտեցումները եկամտային հարկի մասով» բաժնում հեղինակը

եկամտային հարկի մասով հարկային բեռի արդյունավետ և արդարացի բաշխման տեսանկյունից առաջարկել է կիրառել պրոգրեսիվ հարկման համակարգը, միաժամանակ առաջարկում է նախկինում կիրառվող դրույքաչափերի (23 %, 28 %, 36 %) միջակայքերը փոքրացնել: Այստեղ նույնպես առաջարկի կիրառելիության առումով, մեր կարծիքով, կարևոր կլինեն դրույքաչափերի նախընտրելի միջակայքերի կոնկրետ նշումը:

5. Հիշատակված գլխի «Հարկային արտոնությունների կառավարման գերակայությունները հարկային բեռի արդարացի և արդյունավետ բաշխման համատեքստում» եզրափակիչ բաժնում հեղինակը ծավալուն ուսումնասիրություններ է իրականացրել ըստ հարկերի տեսակների հարկային ծախսերի չափի, հարկային եկամուտների և ՀՆԱ-ի մեջ դրանց կառուցվածքի և այլ ուղղություններով: Մեր կարծիքով աշխատանքն առավել շահած կլինեն եթե հնարավոր լիներ ԱԱՀ-ի և եկամտային հարկի մասով ատենախոսի կողմից առաջարկված դրույքաչափերի փոփոխությունների պայմաններում տրվեր հարկային ծախսերի մոտավոր գնահատականները:

Միաժամանակ, հարկ ենք համարում նշել, որ հիշատակված բացթողումները և ցանկությունները էականորեն չեն անդրադառնում աշխատանքի վրա, և ատենախոսության ուսումնասիրությունից ընդհանուր եզրակացությունը հետևյալն է.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արթուր Արմենի Մաթևոսյանի՝ հրապարակային պաշտպանության ներկայացված ատենախոսության թեման արդիական է ու հրատապ: Հեղինակը կարողացել է լուծել առաջադրված խնդիրները:

Աշխատանքում ուսումնասիրվել և ներկայացվել են հարկային բեռի արդարացի բաշխման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում: Ատենախոսը հիմնավորված մեթոդական մոտեցումների կիրառմամբ կարողացել է լուծել առաջադրված խնդիրները:

Ատենախոսության սեղմագիրը և հրապարակված հոդվածները բխում են աշխատանքի բովանդակությունից:

Ատենախոսությունը ունի ինչպես տեսական, այնպես էլ գործնական նշանակություն, աշխատանքի արդյունքային դրույթները կարող են օգտագործվել հանրապետության պետական կառավարման իրավասու մարմինների, մասնավորապես՝ ՀՀ էկոնոմիկայի և ՀՀ ֆինանսների նախարարությունների, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից հարկային համակարգի բարելավման քաղաքականության մշակման, մասնավորապես հարկային բեռի արդարացի բաշխման մոտեցումների հստակեցման, այդ թվում՝ այն կարող է հիմք ծառայել հարկային բեռի օպտիմալ չափի որոշման, դրա արդարացի բաշխման

գործընթացում, ինչպես նաև հետազոտությունը կարող է օգտակար լինել գիտական ուսումնասիրությունների և ուսումնական նպատակների համար:


Արթուր Արմենի Մաթևոսյանի «Հարկային բեռի արդարացի բաշխման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսությունն իր գիտական մակարդակով, հիմնավորվածությամբ, արդիականությամբ համապատասխանում է «ՀՀ գիտական աստիճանաշնորհման կարգի» 7-րդ կետի, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից ներկայացվող պահանջներին, իսկ նրա հեղինակն արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝ Ը.00.02.- «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ:

Պաշտոնական ընդդիմախոս, Հայաստանի ազգային ագրարային համալսարանի գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր



Հ.Ս. Ծպնեցյան

**Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Հ. Ս. Ծպնեցյանի ստորագրությունը հաստատված է՝
Հայաստանի ազգային ագրարային համալսարանի գեղատրի
պարտականությունները կատարող**



Հ.Ս. Զաքոյան

30.04.2024 թ.